ձախ խրում էին կօտու մեջ։ Կանացի կօտին ավելի կարճ էր և ավելի նեղ էր ծալած լինում, քան թե տղամարդկանցը։

7. Կռնլպա. ոտներին հագնում էին տանը գործած 3-4 ռանգ նախշուն կռնլպա, ճիթfէրը կարճ։ Փօխանի փօխկը՝ ծայրը գալիս էր կռնլպայի ճիթfի տակ և ապա վրայից քաշվում էր fօղը։

Քօղը[7] օղակ կարած ժապավեն է, մոտ 9-10 սմ լայնությամբ. օղակի տրամագիծն այնքան է, որ վօտնը մտնի։ Երեսի ստորին կեսը սև կöրծած՝ գործած, իսկ վերին կեսը՝ վերին մասում սև, ստորին մասում՝ սպիտակ։ Վերին կեսը բրդե կամ մետաքսե գույն-գույն թելերով նախշած էր լինում։ Քօղը fըցում ըն՝ գցում են փօխանի վերջավորության և կռնլպայի ճիթfի վրա այնպես, որ փօխանը մարդու աչքը չտեսնի։

Կ ճ ո ջ գ լ խ ի ճ ա r դ ա r ա ն f ի մ ա ս ե r ը. Զանգեզուրի ամուսնացած կինը կըլöխը շինըմ ա՝ կապում է շատ բարդ ձևով։ Այդ պատճառով նա իր գլխի սարքը քանդում էր շատ ուշ-ուշ, մեծ մասամբ գլուխը լվանալիս։ Գլխի հարդարանքի մասերն են՝ 1. մէտակնէր, 2. պալտի, 3. ղազմա, 4. բռջուկատէղ. 5. fէթկալ, 6. կօլի չարղաթ, 7. լէչագ, 8. չանգճլ, 9. չարսավ, 10. կօլտան և 11. չարղաթ։

1. Մէտակնէրը ձևում էին սպիտակ մաճուդավարի կտորից կամ կտավից ղէղաջ՝ եռանկյունի կարած, երբեք հատ, տակինը պիտի լիներ ավելի փոքր, վերինը՝ ավելի մեծ։ Սկզբանում քառանկյունի կտորը ծալում էին եռանկյունաձև և այնպես գլխին գցում։

2. Պալտին՝ գլխին դնելու օղակապ, հեց[8]։ Պատրաստում էին այսպես. պինդ խմորից բաց էին անում տախտակի վրա երիզ, եզրերը վերևից և ներքևից հավասարեցնում, հարթեցնում, որ գլուխը ճարի վօչ, արևի տակ քիչ չորացնելուց հետո պատում էին չորի կտորով և ծայրերը իրար բերելով՝ օղակաձև կարում։

Սկզբանում պատրաստում էին մի քիչ այլ կերպ. վերցնում էին չորի նեղ և երկար զօլ՝ երիզ, վրան քսում էին խմոր և երկարությամբ ծալում կտորի եզրերը, իրար վրա բերելով՝ կպցնում և ստանալով 3-4 սմ լայնություն ունեցող երիզ, անց էին կացնում գլխի գագաթի կլորության չափ տրամագիծ ունեցող ամանի վրա, ծայրերը միացնում էին միմյանց և կարում։ Տակի եզրից կարում էին կտորի մի շերտ, ոչ ամբողջ պալտիի շուրջը։ Ետևի կողմից կարում էին fըղէr՝ կլոր կապեր։

3. Ղազման կարված էր թըփատէղի՝ ճակատի տակի եզրին։ Թըփատէղը պալտիից մի փոքր լայն՝ դrէյից կարած երիզ էր՝ գույնզգույն վառ և պարզ մետաքսե կամ բրդե թելերով նախշուն ասեղնագործած։ Նախշերը լինում էին ծաղիկներ, երկրաչափական գծեր, իրար դեմ կանգնած զույգ թռչուններ և այլն։ Ներքևի եզրից կարում էին դրամների շար՝ մեջտեղն ավելի մեծ մըչանօցը, օրինակ՝ իմպերիալ ոսկի, սրա աջից և ձախից ավելի փոքր պօլումպրճլնէր[9]։ Զքավորները շարում են 25—40 հատ և ավելի քսանկոպեկանոցներ կամ հին դրամներ։ Թըփատէղի երկու ծայրերից կարված են fըղէr՝ կապեր։

---

[7] Կռնլպէն պահելու—подвязка.

[8] Обруч, обод.

[9] Պոլուիմպերիալ ոսկի, ռուս. полуимпериал.